«ԱՅԱՅ ՍԵՔ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խորենացի 28
ՀՎՀՀ՝ 04423755
Հեռ.՝ +374 60 691111 / +374 94 204440, էլ. փոստ՝ iisecinfo@gmail.com

ք.Երևան

<< 07>> հոկտեմբերի 2024թ.

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԷԳԴԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի, պարոն Մարտիրոսյան

Ի պատասխան Ձեր 07.10.2024թ.-ի թիվ 04/09/07157-24 գրությանը, հայտնում ենք, որ ՀՀՍՄ-ԳՀԱՊՁԲ-2024/1 ծածկագրով հայտարարված գնանշման մրցույթի տեխնիկական բնութագրում Ձեր կողմից հիշատակված կետը, հայտարարված է եղել հետևյալ ձևակերպմամբ՝ «Մատակարարը պետք է Շչակների հեռակառավարման համակարգերը միացնի ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կողմից կիրառվող համակարգին»:

Պարզաբանում ենք, որ նշված պահանջում նկատի չի ունեցվել ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման կենտրոնի **կենտրոնացված ազդարարման համակարգը**, այլապես ձևակերպումը կլիներ հետևյալ կերպ ՝ «Մատակարարը պետք է Շչակների հեռակառավարման համակարգերը միացնի ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունում **գործող կենտրոնացված ազդարարման համակարգին»,** ինչպես օրինակ 03.11.2021թ.-ին Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով ազդարարման համակարգի հեռահար կառավարման բլոկի և ձայնային ազդանշանային էլեկտրաշչակների ձեռքբերման մրցույթում: Հիշատակված մրցույթի տեխնիկական բնութագրում եղել է կետ հետևյալ ձևակերպմամբ՝ «Մատակարարը պետք է Երևանի քաղաքապետարանին տրամադրի սարքի և սերվերի միջև տվյալների փոխանակման պրատակոլը՝ **ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունում գործող կենտրոնացված ազդարարման համակարգին միացնելու համար»**:

Վերջինումս ուղղորդում է պարունակվել կոնկրետ համակարգի (տվյալ պարագայում խոսքը վերաբերվել է «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներդրված համակարգին): Գնանշման մրցույթում, մասնակիցներից մեկի կոմից, բողոք է ներկայացվել՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (բողոքի ծածկագիր և ամսաթիվ՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/86, 10.11.2021թ.): Որոշում է կայացվել (որոշման համար և ամսաթիվ՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/86, 30.11.2021թ.) պարտավորեցնել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ, քանի որ նման ձևակերպումը խախտել է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածով սահմանված պահանջները:

ՀՀՍՄ-ԳՀԱՊՁԲ-2024/1 ծածկագրով հայտարարված գնանշման մրցույթում նաև նկատի չի ունեցվել ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությունում գործող ռուսական արտադրության «БУС» համակարգը, ինչը նույնպես (համանմանորեն) կլիներ ՀՀ «Գնումների մասին» օրենքի պահանջների խախտում:

Վերոնշվածի վերաբերյալ և բնութագրում կոնկրետ համակարգի ուղղորդում չպարունակելու վերաբերյալ նաև հաստատում ենք ստացել՝ 15.07.2024թ.-ին ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմում տեղի ունեցած տեխնիկական քննարկմանը նվիրված նիստի ժամանակ (որում ցանկություն էին հայտնել, բայց չէին ներկայացել մյուս մասնակից ընկերության ներկայացուցիչները):

Հիշեցնեմ նաև այն հանգամանքը, որ մեր ընկերության ներկայացուցիչները, գնանշման մրցույթով սահմանված պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցչի հետ միասին ուսումնասիրություն են իրականացրել ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայությունում և պարզել, որ ֆիզիկապես տեղադրված ու գործող մեկ համակարգ կա, որը ռուսական արտադրության «БУС» համակարգն է: Անկախ նրանից, որ գնանշման մրցույթով ուղղակիորեն դա չէր պահանջվում, հայտնել ենք, որ եթե Ձեր կողմից տրամադրվեն տվյալ համակարգի տեխնիկական բնութագիրը, տվյալների փոխանակման պրոտոկոլները և API-ները, կարող ենք մեր կողմից տեղադրման ենթակա Ծչակների հեռակառավարման համակարգերը միացնել ռուսական արտադրության «БУС» համակարգին: Սակայն որոշ ժամանակ անց ստացել ենք պատասխան, որ դա հնարավոր չէ տրամադրել, հետևաբար առաջարկի իրականացման անհնարինության պատճառով վերջինս չի իրականացվել:

Փոխարենը, հստակ գիտակցելով մարզի նման հեռակառավարման համակարգ ունենալու անհրաժեշտությունը և հայրենիքի հանդեպ մեր ունեցած պատասխանատվությունը, առանց ավելորդ խնդիրներ ստեղծելու, առաջարկել և տեղադրել ենք ամբողջական համակարգ, բաղկացած առանձին սերվերային և կապի ապահովման համակարգերից, անխափան սնուցման սերվերային համակարգից, գլխավոր ցանցային բաղադրիչից՝ մուտքային և ելքային տվյալների ֆիլտրման ու երկրորդային կապի ապահովման հնարավորություն ունենալու նպատակով, համակարգը օգտագործողի առանձին տերմինալից (միացված անխափան սնուցման համակարգին և վիդեոպատին) համակարգից լիարժեք օգտվելու և ղեկավարումն իրականացնելու նպատակով: Արդյունքում ստացվել է լիովին ավտոնոմ, անկախ, ապահովության մի քանի շերտերից բաղկացած հեռակառավարման համակարգ:

Ցանկանում ենք նաև արձանագրել այն փաստը, որ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Սյունիքի մարզային վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնում 04.10.2024թ.-ին տեղի է ունեցել նիստ, որում ներկա են գտնվել աշխատանքները ընդունող կողմի, պայմանագրի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողություն իրականացնող մյուս մասնակից ընկերության ներկայացուցիչները: Նիստի ընթացքում մեր կողմից տեղադրված համակարգի տեխնիկական բնութագրի և գնանշման մրցույթով հայտարարված տեխնիկական բնութագրի միջև ոչ մի հստակ անհամապատասխանություն չի հնչեցվել կամ արձանագրվել, ավելին՝ եղել են մի շարք կետեր (տեխնիկական բնութագրով չպահանջված) որոնք իրականացված են եղել մեր կողմից՝ որպես նմանատիպ համակարգերի միջազգայնորեն սահմանված պարտադիր նորմեր:

Վստահ ենք, որ գնանշման մրցույթում քննարկման առարկա դարձած կետում նկատի չի ունեցվել «Լոկատոր» համակարգը, նաև այն պատճառով, որ հանրային հսկողություն իրականացնող մյուս մասնակից ընկերությունը հանձնման-ընդունման աշխատանքներին մասնակցելու ժամանակ շահերի չբախման վերաբերյալ հայտարարություն է տվել: Վերջինս անհնարին կլինել «Լոկատոր» համակարգը նկատի ունենալու դեպքում:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք Ձեզ, որ «ՀՀՍՄ-ԳՀԱՊՁԲ-2024/1» ծածկագրով հայտարարված մրցույթի շրջանակներում մեր կողմից տեղադրված **«Շչակների հեռակառավարման համակարգը, 27 հատ շչակները և 93 հատ շչակի կառավարման համակարգը»** լիովին **բավարարում են** մրցույթով սահմանված պահանջներին ու տեխնիկական բնութագրին:

Հարգանքներով՝

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԱՎԱԳՅԱՆ

Կ.Տ.

«II SEC» «ԱՅԱՅ ՍԵՔ» «АЙАЙ СЕК» 04423755